ՀՌՈՄԵԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՈՍԿԵԴՐԱՄ

1981 թ. ապրիլին Հայկական ՍՍՀ Արարատի շրջանի Նոր կյանք գյուղի տարածքից (հոսող ոռոգման ալիքին) գաշտային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է ոսկյա դրամ[1] թողարկված Հռոմեական Ներոն կայսրի գահակալության տարիներին (54—68 թթ.)։

Դրամի առաջին երեսին պատկերված է կայսրի գլուխը՝ դափնեպսակով, դեմքով դեպի աջ, շուրջը գրություն՝ IMP NERO CAESAR AVG PP։ *Երկրորդ երեսին պատկերված է Սալյուս դիցուհին՝ գահի վրա նստած, դեմքով դեպի ձախ։ Նա առաջ պարզած աջ ձեռքին բռնել է պատարագի սկիհ. ներքևում* SALVS *գրությունն է։ Դրամը երկու կողմերից եզրափակվում է ոչ լրիվ կետավոր շրջանակներով։*

Դրամի տրամագիծը 18 մմ է, քաշը՝ 7,22 գ.։ Այն պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում (մ. մ. № 15260)[2]։

Դրամը թողարկվել է Հռոմի դրամահատարանում 66—68 թթ.[3]։

Քննվող դրամը գտնվել է Հին Արտաշատի թաղամասերից մեկում, որի տարածությունը ներկայումս պատկանում է Նոր կյանք գյուղին։ Այնպես որ հռոմեական ոսկյա դրամի հայտնաբերումը միջազգային առևտրի խոշոր կենտրոններից մեկում պատահական չէ։ Ինչպես հայտնի է, Հռոմեական կայսրության շրջանում հայկական դրամների թողարկումը դրեթե դադարեցվեց։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանի դրամական տնտեսությունում որոշակի դեր պետք է ունենային հռոմեական դրամները։ Սակայն դրանք Հայաստանում, ըստ երևույթին, անմիջապես լայն տարածում չեն ստացել։ Այդ են վկայում հատկապես Օգոստոս կայսեր դրամների տարածումը Հայաստանում[4]։

Քննելով Հայկական ՍՍՀ տարածքից հայտնաբերված հռոմեական դրամները, դալիս ենք այն եզրակացության, որ տակավին հռոմեական ոչ բոլոր կայսրներն են ներկայացված իրենց դրվագումներով։ Այսպես, մինչև օրս արձանագրված չէ Ներոնի գահակալության տարիներին դրվագված և ոչ մի արծաթյա կամ պղնձյա դրամ

---

[1] *Դրամը հայտնաբերել է Նոր կյանք գյուղի բնակիչ Մյասնիկ Սարիբեկյանը. այդ մասին մեզ տեղեկացրել է պատմական գիտությունների թեկնածու Ա. Այվազյանը, որի համար հայտնում ենք խորին շնորհակալություն։*

[2] H Mattingly, Coins of the Roman Empire in the British museum, v. I, London, *1965. դրամի առաջին երեսը ինչպես № 79 (էջ 211), երկրորդը՝ № 87 (էջ 212)։*

[3] *Նույն տեղում, էջ* CLXVI։

[4] Г. В. Саркисян, Монеты с изображением Августа и Армения. Проблемы античной истории и культуры (Доклады XIV международной конференции античников социалистических стран «Эйрене»), т. I, Ереван, 1979, с. 249.

(թեպետ դրանց առկայությունը չպետք է բացառել), իսկ ներկայացվող դրամը առաջին և դեռևս միակ ոսկյա օրինակն է։

I դ. Հայաստանում ոսկյա դրամներ չեն դրվագվել, համենայն դեպս անգամ Տիգրան II-ի և նրա հետնորդների ժամանակ այդպիսի դրամների թողարկումներ հայտնի չեն։ Այդ պատճառով, ներմուծված ոսկյա դրամների քննությունը ունի կարևոր նշանակություն Հայաստանի դրամական շրջանառությունը առավել որոշակի և հստակ ներկայացնելու համար։

Մինչև օրս Հայկական ՍՍՀ տարածքից հայտնաբերվել են Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում դրվագված միայն երկու ոսկյա դրամ (աուրեուսներ)։ Մեկը 1973 թ. Գառնիում գտնված Տիբերիոս կայսեր (14—37 թթ.) օրոք դրվագված աուրեուսն է (տրամագիծը՝ 18 մմ, քաշը՝ 7,78 գ), որը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում (մ. մ. № 13658)[5], մյուսը՝ քննվող նորահայտ դրամն է։

Պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանի կենտրոններ Գառնիից և Արտաշատից հայտնաբերված այս երկու ոսկյա դրամները առաջին արձանագրված օրինակներն են, որոնք թողարկվել են I դ.։ Թեպետ մեր տրամադրության տակ եղած դրամագիտական նյութերը մեծ չեն, այնուամենայնիվ դրանք հնարավորություն են տալիս վերականգնելու հին Հայաստանի դրամական շրջանառության ընդհանուր պատկերը։

ՀԵՆՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

---

[5] Տե՛ս H. Mattingly, նշվ. աշխ., էջ 126, № 46.